

ՀԱՅՀԱՅԱԿԱՆ ՄԱՍԻՆԻՍՏՐԱԿԱՆ ԸՆԿԱԼՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայրապետյան Լ.Ու.¹, Թևանյան Մ.Մ.²

¹Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան,

²Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարան

Երևան, Հայաստան

Սույն հոդվածի հետազոտության առարկան հայիդյախոսությունն է՝ որպես բարդ սոցիալ-լեզվաբանական (սոցիոլինգվիստիկ) և հոգելեզվաբանական (փսիխոլինգվիստիկ) ֆենոմեն (երևույթ), որն արտացոլում է լեզվամշակույթի վիճակը, բարոյական կողմնորոշիչները և հասարակական զարգացման մակարդակը: Աշխատանքում դիտարկվում են հայիդյական բառապաշարի ծագումնաբանությունը, զարգացման հիմնական փուլերը և գործառնության ժամանակակից ձևերը, ինչպես նաև տարբեր սոցիալական ու հաղորդակցական միջավայրերում դրա տարածման վրա ազդող գործոնները:

Հետազոտությունը հիմնված է արտասահմանյան և հայկական հոգելեզվաբանության, սոցիալ-լեզվաբանության ու մշակութաբանության մեջ առկա գիտական մոտեցումների վերլուծության վրա: Հատուկ ուշադրություն է դարձված ոչ նորմատիվ (ոչ գրական) բառապաշարի հասարակական ընկալմանը, միջանձնային հաղորդակցության մեջ դրա դերին, ինչպես նաև հայոց լեզվում հայիդյական արտահայտությունների կիրառման վերաբերյալ ժամանակակից հայ մտավորականության ներկայացուցիչների դիրքորոշմանը:

Պարզվել է, որ գլոբալացման (համաշխարհայնացման) գործընթացների, հաղորդակցության թվայնացման, սոցիալական ցանցերի զարգացման և միջմշակութային փոխազդեցության ազդեցության ներքո հայիդյական բառապաշարի գործածության բնույթը կրում է զգալի փոփոխություններ: Ընդ որում, ժամանակակից հայ լեզվական տիրույթում նկատվում է ինչպես կիրառության ձևերի, այնպես էլ խոսքային տարբուների (արգելքների) մասին ավանդական պատկերացումների ընկալման բնույթի փոխակերպում: Հիմնավորվում է այն գաղափարը, որ ոչ նորմատիվ բառապաշարի տարածման սահմանափակման գործում էական դեր ունեն հասարակության իրավական մշակույթի մակարդակը, տեղեկատվական տիրույթի օրենսդրական կարգավորման արդյունավետությունը, քաղաքացիական

Թղթակցական հասցեն՝ Հայրապետյան Լիլիթ Ունանի, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան, Հայաստան, ք.Երևան, Տերյան փող., 105 շենք, e-mail: lilt.hayrapetyan1994@gmail.com, +374 93 317236

հասարակության վիճակը, ինչպես նաև բնակչության կրթական ու մշակութային մակարդակը:

Բանալի բառեր. հայիոյախոսություն, հայիոյանք, ոչ նորմատիվ բառապաշար, խոսքային տարրեր, լեզվական փոխառություններ, հոգելեզվաբանություն, սոցիալ-լեզվաբանություն, թվային հաղորդակցություն, ինտերնետ-հարթակների կարգավորում:

Հայիոյանքը հաղորդակցման գործընթացում մարդու հուզաշխարհի լեզվական արտահայտչամիջոց է, որը սերտորեն առնչվում է սոցիալական, հոգեբանական, մշակութային այնպիսի գործոնների հետ, ինչպիսիք են տարիքը, գենդերային պատկանելությունը, էթնոհոգեբանությունը, կրթական մակարդակը, սոցիալական որոշակի խմբում ընդգրկված լինելը, աշխարհաքաղաքական և մշակութային փոխակերպումները և այլն: Մեզանում «հայիոյանք» եզրույթը հանրային կյանքի լայն շրջանակներում ընկալվում է զուտ որպես սեռական, մարմնական բնույթի տարրերը խախտող արտահայտություն, մինչդեռ աշխարհի շատ լեզուներում դրա բառիմաստային շրջանակն է՛լ ավելի ընդգրկում է. որպես մարդկային շփումներում գործող խոսույթի ձև՝ այն ներառում է ոչ միայն անպարկեշտ, անվայելուչ բառերն ու գռեհկաբանությունները, այլև վիրավորական արտահայտությունները: Հայերենի բառարանագրության մեջ ևս այդ բառը մեկնաբանվում է որպես անարգական, նախատական, լկտի, վարկաբեկիչ խոսք: Ասվածի առհավատչյան է լեզվաբանական այն փաստարկը, որ հայիոյանք բառի հայ և հոյ արմատները ծագումով փոխառված բնածայնություններ են, որոնք պարսկերենում հնչել են որպես «ծաղրական բացականչություն», և դրա բայական տարբերակը՝ հայիոյել, նշանակում է «վատ խօսք ասել, յիշոց տալ, անարգել, չարախօսել, վատահամբալել» [1, էջ 29-30]:

Հայիոյանքների ծագումն ուսումնասիրողները հիմնականում եզրահանգում են, որ դրանց ձևավորվման արմատները տանում են մարդկության պատմության վաղ անցյալ և հիմքում ունեն առասպելաբանական պատկերացումներին, կրոնական համոզմունքներին, էթնիկական ավանդույթներին, մարդու և կենդանիների բնագոյներին ու ֆիզիոլոգիական գործընթացներին առնչվող հասկացություններ:

Հայ խոսույթում առկա հայիոյանքների ծագումնաբանական և բարոյահոգեբանական մեկնաբանություններում ուշագրավ է ազգագրագետ-երաժշտագետ Հռիփսիմե Պիկիջյանի՝ հորովելների բանաստեղծական տեքստերի դիտարկումը, ըստ որի՝ դրանցում առկա են սեռական վարքագիծ ակնարկող բառեր կամ արտահայտություններ, անգամ հայիոյական խոսքեր՝ հնչած գութանավարի մասնակիցներին «հաց բերող» և «հացը ուշացնող» կանանց հասցեին, և նման արտահայտություններից հետո կրկնվող «Ջորանա՛ս, հոտաղ, զորանա՛ս...» բացականչություններ: Ըստ ազգագրագետի՝ նմանատիպ հայիոյանքները հայ էթնոսի հեթանոսական շրջանից եկող ծիսական արմատներ ունեն, որոնք տարբեր ժամանակաշրջաններում տարբեր իմաստավորումներ են ստացել՝ «ներառելով այլևայլ

առասպելաբանական կերպավորումներ, սակայն բոլորի հիմքում ընկած է Հողի և Երկնքի սրբազան ամուսնությունը, որի արդյունքում ծնունդ է առնում կյանքը՝ պտղաբերությունը» [2, էջ 29-30]:

Անշուշտ, այստեղ խոսքը վերաբերում է հնագույն քաղաքակրթություններում, այդ թվում նաև Հայկական լեռնաշխարհում տարածված Ֆալլոսի պաշտամունքին, որից հետևում է, որ սեռական հայիոյանքը նախկինում չի դիտվել որպես անարգանք, սակայն, ժամանակի ընթացքում, կորցնելով ծիսական նշանակությունը, վերածվել է վիրավորական դարձվածքի և արժեքային համակարգում գնահատվել որպես տաբուավորված խոսույթ: Մինչև 21-րդ դարը տաբու է համարվել անգամ հայիոյախոսական բառապաշարին անդրադառնալը: Եթե այլ ժողովուրդների՝ անցած դարերում գրված բառարաններում ընդգրկվել են նաև ժարգոնները, անպարկեշտ բառերն ու հայիոյանքները (օր.՝ Սեմյուել Ջոնսոնի 1755 թ. «Անգլերեն լեզվի բառարանը»), ապա մեր բառարանագրության մեջ այդ բառաշերտերից մեծամասամբ խուսափել են և գիտական քննության գրեթե չեն արժանացրել: Պատճառներից են նաև լեզվական մշակույթի նորմերով մայրենին գոեհկաբանություններից զերծ պահելու շարունակական միտումը և, անկասկած, խորհրդային շրջանի գրաքննությունը, որն արգելք էր դնում սահմանված քարոզչությունից շեղվող ցանկացած ուսումնասիրության վրա:

Հետխորհրդային շրջանում, երբ բացվեցին «երկաթե վարագույրները», աշխուժություն նկատվեց արգելված թեմաների՝ այդ թվում նաև հայիոյանքների և անպարկեշտ արտահայտությունների ուսումնասիրության ոլորտում: Ռուս լեզվաբաններից և գրողներից շատերը (Ա. Յու. Պլուցեր-Սարնո [3], Վ. Վ. Վինոգրադով [4], Վ. Մ. Մոկիենկո [5] ևն) գրեցին հոդվածներ, կազմեցին բառարաններ ռուսալեզու խոսույթում մշտապես գործածվող հայիոյանքների և դրանց էվֆեմիզմների (մեղմասացություն) թեմաներով:

Հայերենում ևս հետխորհրդային շրջանում սկսեցին անդրադառնալ տաբուավորված խոսույթին: Այդ համատեքստում գիտահետազոտական հաջողված աշխատանքներից է «Քրեական («գողական») խոսվածքի բացատրական բառարանը» [6], որում ոչ միայն ստուգաբանորեն ներկայացվում է ենթամշակութային լեզվի բառաշերտը, այլև նշվում խոսակցական լեզվի զարգացման տարբեր փուլերում դրա համագործածական դառնալու գործընթացը: Շարունակաբար հրատարակվում են նաև հայիոյախոսությանն առնչվող գիտական հոդվածներ, որոնք, սակայն, առավելապես գրված են անգլերենով կամ առավելապես ուղղված են օտար լեզուների խոսութային համակարգին: Նման օրինակներից են՝ հետազոտողներ Ա. Պողոսյանի՝ անգլերենում տաբու բառերի իմաստաթեմատիկ դասակարգման [7], Ա. Կնյազյանի և Լ. Արտոնիի՝ անգլերեն, իտալերեն և ռուսերեն հայիոյանքների համեմատական վերլուծության [8], Ա. Այունցի և Ս. Պարոնյանի՝ բրիտանական և հայ լեզվամշակույթներում ատելության խոսքի համեմատական վերլուծության [9] թեմաներով ուսումնասիրությունները:

Օտարագգի հետազոտողները հայիոյախոսության դրդապատճառներն ու զարգացման միտումները **հիմնականում կապում են դրա սեռային, սոցիալական, հոգեբանական, լեզվա-մշակութային** գործոնների հետ: Հոգեբանության մեջ, ուսումնասիրելով հայիոյանքի՝ խոսույթում գործածության դրդապատճառները, առանձնացնում են հայիոյախոսության երկու տեսակ՝ վերահսկվող և ռեֆլեքսիվ: *Վերահսկվողը* գիտակցված, միտումնավոր, դիտավորյալ կամ պլանավորված հայիոյանքն է, երբ խոսողն ընտրում է հայիոյանքի տեսակն ու արտահայտչաձևը, *ռեֆլեքսիվը* ակամա, ավտոմատ, անվերահսկելի, իրավիճակային հայիոյանքն է, որը դրսևորվում է որպես հուզական պոռթկում [10]: Շրջանառվում են նաև «հաճախակի հայիոյանք» և «հայիոյանքի պարադոքս» բնութագրումները: Առաջինն ունի սովորութային բնույթ, երբ խոսողը չունի անպարկեշտ լինելու հատուկ մտադրություն, և հայիոյանքն օգտագործվում է որպես խոսքի երանգավորման միջոց: «Հայիոյանքի պարադոքսը» դրա տաբու լինելով հանդերձ խոսույթում տարածված լինելու իրողությունն է: Մասնագիտական շրջանակներում ընդհանուր առմամբ հայիոյանքները խմբավորվում է հետևյալ տեսակներով. պատահական, միտումնավոր, սովորութային, սոցիալական, ռճական բնույթի, ժեստային, հումորային և այլն [10, 11]: Այդ համատեքստում **ուշագրավ է նաև ռուս լեզվաբան Վ. Մոկիենկոյի առաջարկած տարբերակը. 1)** Շեշտադրված բացասական հատկանիշներով անձանց բնորոշող անուններ (*հիմար, ապուշ, տխմար, սրիկա, անպիտան, տականք, աղբ, պարզամիտ, պոռնիկ, գիշերային գեղեցկուհի, մարմնավաճառ* ևն). 2) Մարմնի «անպարկեշտ», սոցիալապես տաբու հատվածների անվանումները՝ «ամոթալի բառեր». 3) Սեռական ակտի կատարման գործընթացին առնչվող անուններ. 4) Ֆիզիոլոգիական ֆունկցիաների անվանումներ. 5) Ֆիզիոլոգիական ֆունկցիաների «արդյունքների» անվանումներ [12]:

Հետազոտողները իրավացիորեն շեշտում են, որ հայիոյանքներն ունեն ազգային հոգեբանությանը և տվյալ լեզվի ենթամշակութային խոսույթներին բնորոշ առանձնահատկություններ, որոնք կարող են ուսումնասիրվել միայն ավելի նեղ՝ էթնիկական մշակույթի շրջանակներում: Հետևաբար արդի հայերենի տաբուավորված խոսույթը, որպես ազգային լեզվամտածողության արտահայտչաձև, պահանջում է հետազոտման ուրույն մոտեցումներ:

Հայ հետազոտողներից *Էլիզաբեթ Մուրադյանը* արդի խոսույթի սեռական հայիոյանքները բաժանում է երեք խմբի: Մի դեպքում հայիոյվողին ուղարկում են դեպի *իգական սեռական օրգաններ*, որոնք, ըստ հոգեվերլուծաբանների, ոչ միայն ծննդյան, այլև մահվան սիմվոլներ են. մյուս դեպքում՝ դեպի *արական սեռական օրգաններ*, ինչն անարգանք է՝ ուղղված հայիոյվողի արժանապատվությանը. երրորդ դեպքում սեռական գործողությունն ուղղվում է *հայիոյվողի ծնողին*, ինչը սիմվոլիկ մակարդակում շեշտում է հայիոյողի ուժն ու առավելությունը: Նա նաև առանձնացնում է հայիոյանքների գործածման մի շարք ոլորտներ՝ *տղամարդկանց*

(լիցքաթափման ու մտերմիկ ընկերական միջավայր ստեղծող, շփումը հեշտացնող), *ղեկավարների* (մրցակիցների նկատմամբ զոլոգիական հոմոսեքսուալ ճնշում դրսևորող), *անկողնային* (շփման խոչընդոտները վերացնող և պոտենցիան բարձրացնող), *բոհեմական, առօրեական, ... տեղի-անտեղի* [13]:

Հայիոյախոսությունը հաճախ քննության նյութ է դառնում մերօրյա առցանց կայքերում, գրվում են հրապարակախոսական հոդվածներ, ծավալվում բանավեճեր, հարցազրույցներ, որոնցով տեսանելի է դառնում այդ երևույթի հանրային ընկալումը:

Փորձեր են արվում հայիոյանքները խմբավորել ըստ մեր ազգային աշխարհընկալման: Օրինակ՝ հայիոյանքների թեմատիկ բաժանման հետաքրքիր նմուշ է **Գրիգոր Առաքելյանի խմբավորումը** [14], ըստ որի՝ դրանք լինում են **սեռական (կառուցված մարմնական մասերի և գործողությունների համադրմամբ), քաղաքական (օր.՝ վերբալ մարմնավաճառ, ժեխ, բոմժ, լափամանից օգտվող, պիցցայակեր, դինոզավր, առնետրավազքի արվեստին տիրապետող, քաղաքական դիակ ևն), փաղաքշական (օր.՝ շան տղա, շան աղջիկ, շան լակոտ, իշու ձագ, լակոտ, կյանքիս տորմուզ), վարորդական (օր.՝ ոչխար, անասուն, էշի գլուխ, բոզի տղա, համբալ ևն), «յոթ հարկանի»** (նշված բոլոր չորս խմբերի հայիոյանքները ներառող):

Ինչպես հետխորհրդային այլ երկրներում, մեզանում ևս հայիոյախոսության թեմային անուղղակիորեն առնչվում է գրականության մեջ և առհասարակ մշակութային կյանքում խոսույթի՝ տաբուներից ձերբազատման միտումը, որը հատկապես տեսանելի է մերօրյա **մտավորականների տեսակետներում**:

Դա անշուշտ ունի իր բացատրությունը: Արդի ժամանակաշրջանին բնորոշ համաշխարհայնացումը և խոսքի ազատությունը խթանել էին մշակութային փոխակերպման միտումները, և «դրսից» ներմուծված լեզվամշակույթը բուռն արձագանք գտավ հայ հանրային կյանքի լայն շրջանակներում: Ազգային ավանդապաշտության դեմ հաղթարշավ սկսած այլախոհությունը տեղեկատվական նյութի առատության և հրատապության պահանջով բնականաբար պիտի դրսևորվեր հատկապես մամուլում և համացանցում: Ասպարեզ եկան այն մտավորականները, որոնց տեսակետները, լեզվամատածողությունն ու խոսույթը նախկինում անընդունելի էին: Այդ շարքում կային գրողներ ու թարգմանիչներ (Վիոլետ Գրիգորյան, Զավեն Բոյաջյան, Վահե Ավետյան, Մաշա Մելիք-Ադամյան, *Արամ Պաչյան*, Սամվել Մկրտչյան և այլք), որոնք էլեկտրոնային կայքերում (Ինքնագիր (2001-2004), Բնագիր (2005-2018), Գրանիշ, Գրահավաք, Բրավո, Մեդիամաքս ևն) հրապարակեցին նախկինում տաբուացված բառապաշարով ստեղծագործություններ: Հայտնվեցին նաև դերասաններ ու բլոգերներ* (Սերգեյ Դանիելյան, Վարդան Ղուկասյան), որոնց խոսույթը հագեցած էր բառարաններում տեղ չգտած անվայելուչ բառերով և հայիոյանքներով: Հրապարակվեցին արգելված բառապաշարի թեմայով բանավեճեր,

* Բլոգեր - համացանցում էլեկտրոնային օրագիր վարող անձ

քննարկումներ, հոդվածներ, որոնցում երևում էր տաբուացված խոսքի և մասնավորապես հայիոյախոսության հանրային ընկալումը: Մերօրյա ազատախոհ մտավորականներից շատերը շեշտում են այն իրողությունը, որ այլ լեզուներում շատ հայիոյանքներ, ունենալով գործածության լայն շրջանակ, գրեթե կորցրել են իրենց սեռական նշանակությունը և հնչում են որպես իդիոմային կարծրատիպեր. օրինակ՝ fuck, shit (անգլ.), сука, хрень, фиг, блядь, трахаться, на хуй (ռուս.), իսկ հայերենում, քանի որ չկան մեր բարոյախոսությամբ սահմանված նման փոխարինողներ, դրանցից շատերը պատճենմամբ փոխառվում և գործածվում են որպես էվֆեմիզմներ: Ստորև բերենք օրինակներ [15] մերօրյա ազատամիտ վերլուծաբանների մտքերից. *Հովհաննես Իշխանյան* (գրող) - «Սասունցի Դավիթ» էպոսում կա «Ժաժ» բառը, ինչը աշակերտների մոտ հիստերիկ ծիծաղ է առաջացնում, գռեհիկ բառ է համարվում, սակայն իմաստով նշանակում է շարժվել: Գերմանացի գրող Գյոթեյի անունն էլ հաստատ գռեհիկ չէ, սակայն մեզ մոտ նրա անվան վրա սկսում են ծիծաղել: «Բոզ» բառը նշանակում է «գույն»...»: *Վրեժ Շահրամանյան* (սեքսապաթոլոգ) - «Հայոց լեզվում սեռական բնույթի բոլոր բառերը մի շարք օբյեկտիվ պատճառներով գտնվում են «վտանգ», «պատիժ» և «ստորացում» իմաստային շրջանակներում ... Եվրոպական և որոշ այլ լեզուներում սեռական բառարանի բառերի ճնշող մեծամասնությունը գտնվում է «հաճույք» և «ամոթ» իմաստային շրջանակներում, և միայն մի քանիսը՝ վերոհիշյալ շրջանակներում»: *Ռուբեն Պողոսյան* (հոգեբան) - «Հայիոյանքները բառեր են, որոնք արտահայտում են բռնություն: Իրենց մեջ եղած ագրեսիան մարդիկ արտահայտում են բառերի միջոցով: Եթե մարդն անվերջ հայիոյում է, ապա համարվում է խնդիր ունեցող մարդ: Մարդկության առաջացման ժամանակաշրջանում ագրեսիան եղել է մարմնական՝ բռնության և սպանության տեսքով: Հետագայում խոսքը եկել է օգնության, և մարդիկ սկսել են սպանել ոչ թե մարմնապես, այլ խոսքի մեջ»: *Նարինե Դիրբարյան* (լեզվաբան) - «Երկու ծայրահեղության մեջ ենք. ունենք հայիոյաբանական բառապաշար, որտեղ ոչ միայն փոխառյալ բառեր են՝ հիմնականում թուրքերենից կամ արաբերենից, այլ նաև բնիկ հայկական կազմություններ: Մյուս ծայրահեղությունը գիտաբառերն են... Անգլերեն լեզուն այդ տեսանկյունից շատ ճկուն է... [Հայ] գրականության մեջ դրանց օգտագործումն առաջացնում է բռնկումներ և բացասական գնահատականներ: Հիշենք վերջին շրջանների պոետներին, օրինակ՝ Վիդեա Գրիգորյանին: Նա խիստ տաբուավորված բառերը** գրականություն բերելու և գրական լեզվի մի մասնիկ դարձնելու հետաքրքիր փորձեր է անում [16]»: *Խաչիկ Հարությունյան* (պատմաբան) - «Հանրային հեռուստատեսությամբ ֆիլմերի, սերիալների թարգմանության ժամանակ հաճախ հայիոյանքը թարգմանում են «շինել» բառով: Կատարվել է բայի իմաստի ընդլայնում, քանի որ բայն իր իմաստով ոչ մի կապ չունի այդ հայիոյանքի հետ: Բառը հաջողությամբ մտավ մեր բառապաշարի ակտիվ շերտ,

** խոսքը Վ. Գրիգորյանի «Տաղ անավարտ...» աղմկահարույց բանաստեղծության մասին է:

շատերը շարունակում են հումորներ անել դրա հետ կապված»: Սամվել Մկրտչյան (գրող, թարգմանիչ) - «...մեզ մոտ բառերի վրա դրված տաբուներն ավելի շատ են, քան այլ լեզուներում: Օրինակ, ռուսերենում մայր հայիոյելն իմաստազրկված է, խոսակցական լեզվում կիրառվում է և չի ընկալվում որպես խորը վիրավորանք: Ժամանակ է պետք, որ մեզ մոտ էլ այդ բառերը արժեզրկվեն»: Զավեն Բոյաջյան (գրող, թարգմանիչ) - «Առաջին համաշխարհային պատերազմից հետո Արևմուտքի լեզուները ազատականացան, և անցենզուր բառապաշարի զգալի մասը սկսեց գործածվել արվեստի մեջ, ինչը մեզ մոտ տեղի չունեցավ... Անգլերենում ասում են *fuck*, ռուսերենում՝ *мрaxамь*, հայերենում՝ *գորողը տանի՜*»:

Ընդհանրացնելով վերը բերված կարծիքները, որոնց մեջ գերազանցում է բանավոր և գրավոր խոսույթի ազատականացման գաղափարը, կարելի է եզրակացնել, որ հայ խոսույթում հաճախադեպ հանդիպող շատ բառեր ու արտահայտություններ (հատկապես սեռական բնույթի) դեռևս չեն ձերբազատվել տաբուի կարգավիճակից. մի բան, որը մեծապես խոչընդոտում է դրանց գիտական ուսումնասիրությանը և տարածվածության կանխման մեթոդների մշակմանը:

Արդի սերնդի հայիոյախոսությունը մեղմասացություններով (էվֆեմիզմ) հարմարվում է ժամանակակից պահանջներին. փորձ է արվում հնուց ժառանգած ձևակերպումները մեղմացնել՝ միաժամանակ պահպանելով արտահայտչական ուժը: Դրանցում առկա է ոչ միայն լեզվական փոփոխություն, այլև սոցիալական և մշակութային դինամիկա: Հայիոյանքները երբեմն վերածվում են հնի *կողավորված, կրճալված* ձևերի (*ես քո, քո մերը, գործիդ գնա, հոգեկան, քաղաքական դիակ* ևն) կամ ասվում են *հումորային եղանակով* (*գործիդ գնա, դմբո, հագնել, շինել, դոմփել, խփնված* և այլն): Կան նաև բառակազմական նորաբանություններ (*ֆռռա քո տեղը, տար քեզ, բերանդ քաշի, բերանդ տար, քո գործը ֆռռա*), այլ մշակույթներից փոխառություններ և փոխակերպումներ (ռուս.-ից՝ *դեբիլ, բլյատ, բլին, սուկա, նահույ, նաֆիզ* ևն: Անգլ.-ից՝ ժարգոնային տարբերակներով՝ *ֆաքել* (*from fuck*), *շիթնել* (*from shit*), *մադաֆաքա* (*motherfucker*), *հըլա շիթ արա* (*go mess up*) ևն), որոնք դարձել են զուտ կարծրատիպային ձևակերպումներ և անգամ սոցցանցերում արտահայտվում են էմոջիներով^{***}: Գործածական են նաև «դրսից» փոխառված ժեստային տարբերակները (*երեք մատի կոմպոզիցիա* [թզի նշան], *միջնամատի ցուցադրում, ձեռքի ափով խփել մյուս ձեռքի բռնցքին* ևն): Նոր սերնդի որոշակի խմբերում դեռևս գործածական են հին սերունդներից պահպանված ձևերը (*էշից ընկած, էշի գլուխ, էշի քուռակ, քհանդամվի գնա, քհանդամը գլորը, շան ծիծ կերած, շուն շան որդի, հերդ շուն դառնա, հաչոցդ կտորի*): Արդի խոսույթում նկատվում է նաև ծածկալեզվային բառերի գործածման ակտիվություն, որոնք «միջավայրի փոփոխության հետևանքով... ոչ

^{***} Էմոջի՝ նշան, սիմվոլ - գաղափարագրերի և սմայլիկների լեզու, որն օգտագործում են համացանցային շփումներում:

միայն իմաստափոխվում են և կիրառվում մեղմ ու կոմպրոմիսային իմաստներով, այլև երբեմն ստանում են աշխարհիկ իմաստներ» [6, էջ 4]: Նմանատիպ բառօգտագործումը բնորոշ է նոր սերնդի «թաղային» միջավայրի «տղայական» խոսույթին (*ագարկա, բիճ, բոզ, բոզի տղա, դանդալոշ, շառ անող, բոսյակ, գյադա, գանդոն, գյոթ, ժեխ, ժուլիկ, լոխ, կոխ, համբալ, հարիֆ, շեստյորկա, շլանգ, պիդո, պիտուխ, ստուկաչ, տուֆտա, փսիխ, օլուխ, գործ տվող, ս-դ քաշի, հավայի խոսող, յուղ ես վառում, նագլիություն մի արա* ևն): Այս շարքին կարելի է հավելել ինքնահայտյանքը (*շնից ծնված ըլնեմ, շան տղա ըլնեմ, բոզի տղա ըլնեմ* ևն), որը հայտյանքի փոխզիջումային տարբերակ է և համարժեք է երդմանը:

Հայտյախոսության դրդապատճառների և տարածվածության հարցում կարևորվում է *սոցիալական միջավայրը*, որը որոշիչ դեր ունի հաղորդակցության գործընթացում: Հատկապես էական նշանակություն ունի հայտյոդի՝ որպես սոցիումի ներկայացուցչի կարգավիճակը: Որքան բարձր է խոսողի սոցիալ-քաղաքական կարգավիճակը, այնքան մեծ է նրա խոսույթի բարոյահոգեբանական ազդեցությունը՝ անկախ այն հանգամանքից, թե ինչ նպատակով է գործածվել հայտյանքը (ինքնահաստատման, թշնամանք սերմանելու, խոսքի ռճավորման, պատահականորեն, հումորային մթնոլորտ ստեղծելու կամ այլ):

Հայտյախոսության դրդապատճառների թվում առաջնային տեղ ունի նաև նյարդաբանական գործոնը, որը դրսևորվում է հատկապես ակամա, տեղի անտեղի հայտյելու պարագայում: Հոգեբանական տեսանկյունից դա մարդու հուզական լիցքաթափման արտահայտություն է, որը հարկադրական ու անվերահսկելի է դառնում նյարդաբանական խանգարումների ժամանակ (տուրետի համախտանիշ, ալցհայմերի հիվանդություն, սենիլ դեմենցիա, էպիլեպսիա և այլն): Հոգեբանական այս փաստարկով գիտական ոլորտներում շրջանառվում է այն կարծիքը, թե հայտյանքն օգտակար է. բարձրացնում է ցավի հանդեպ դիմադրողականությունը, ֆիզիկապես ուժեղացնում և սթրեսը մեղմացնող մեխանիզմով կարգավորում է հուզաաշխարհը: Միաժամանակ խթանում է սոցիալական կապը, բարձրացնում վստահությունը և օգնում հաղթահարել հիասթափությունը՝ ակտիվացնելով օրգանիզմի «կռվի կամ փախի» բնական արձագանքը [10, էջ 271]:

Այնուհանդերձ, հայ ազգային ավանդապաշտությամբ՝ հայտյախոսությունը եղել և մնում է անընդունելի: Դեռ հարյուր տարի առաջ (1924 թ.) «Մաճկալ» լրագրում տպված հոդվածում տեսանելի է «հայտյանքի պարադոքսը»՝ տարածվածությունը և դատապարտելի համարվելը: Հեղինակը, քննադատելով գյուղերում մեծ տարածում ունեցող հայտյախոսությունը, վերջում ավելացնում է. «Այս ուղղությամբ օրինակելի որոշում է արել Դվինի գյուղգործկոմը: Նա որոշել է վերջ տալ հայտյանքին, և նրանք, որոնք կհայտյեն, նրանց ենթարկել տուգանքի - շտրաֆի 3-ական փութ ցորեն, հօգուտ գյուղի խրճիթ ընթերցարանի և ակումբի» [17]:

Արդի ժամանակաշրջանում խոսքի տարածման աղբյուրները՝ ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ մեզանում բազմաթիվ ու բազմաձև են՝ հեռուստատեսություն, ռադիո, մամուլ, սոցիալական կայքեր, տարատեսակ խմբավորումներ (սոցիալ-քաղաքական, ընկերային, ենթամշակութային, կրթական, ընտանեկան ևն), ուստի գտնել այն իդեալական բանաձևը, որը հանգուցալուծում կտա հայիոյախոսության կանխմանը, դժվար է ասել: Սակայն, ինչպես վերևի օրինակում, անշուշտ մեր օրերում էլ կան ռազմավարական մեթոդներ՝ գիտական և վիճակագրական հետազոտությունների հենքով օրինական դաշտում վերահսկելու և կարգավորելու խոսույթի ոլորտը:

Այդ գործընթացի կարիքն ունի հատկապես համացանցային տիրույթը, որն իր տեղեկատվական գործառույթներով ձեռք է բերել *գերակա կարգավիճակ* ոչ միայն լրատվական և գիտական ասպարեզներում, այլև ազատ խոսքի տարածման բոլոր ձևերում (սոցցանցեր, գրաքննության չենթարկվող էլեկտրոնային կայքեր և այլն): Այստեղ օգտատերերի առաջ լայն դռներ են բացվում նպատակայնորեն հանրայնացնելու իրենց հուզաշխարհը՝ միջմշակութային հաղորդակցության մեջ օգտագործելով խոսքային և ոչ խոսքային ներուժի դրական և բացասական ազդակները [18]: Աշխարհում մշակվում են համացանցային տիրույթի վերահսկման տարատեսակ «գործիքներ»: Դրանք բառարանային ֆիլտրերով հեռացնում են վիրավորական կամ անպարկեշտ արտահայտությունները, օգտատիրոջը նախազգուշացնում անցանկալի բառապաշարի մասին, արգելափակում այն գրառումներն ու կայքերը, որոնցում առկա է հանրությանը սպառնացող կամ թիրախավորող խոսույթ (անպարկեշտ բառապաշար, ատելության խոսք, բռնության կոչ, ազգայնական, ռասիստական, գենդերային խտրականության խրախուսում և այլն): Մեզանում, սակայն, այդ տեխնոլոգիաները միշտ չէ, որ հնարավոր է գործարկել, քանի որ դրանք դեռևս հարմարեցված չեն հայերենի լեզվամտածողությանն ու լեզվաարտահայտչական բազմաձևությանը:

Աշխարհի շատ երկրներում հայիոյախոսությունը օրինական դաշտով պատժելի է, մինչդեռ Հայաստանում խոսքի օրենսդրական սահմանափակումները վերաբերում են վիրավորանքին և զրպարտությանը: Դրանք հիմնականում կարգավորվում են քաղաքացիական օրենսգրքով, իսկ քրեական օրենսգրքով՝ մասնակի դեպքերում: Բուն հայիոյանքը դատապարտող դրույթներ չկան, եթե այն չի դիտարկվում որպես ծանր վիրավորանք՝ հետապնդելով օրենքով սահմանված՝ հանրային գերակա շահին սպառնացող վտանգ [19]: Օրենքի նման սահմանափակումները ելնում են խոսքի ազատությանը չհակասելու անհրաժեշտությունից:

Այստեղից մնում է եզրահանգել, որ հայիոյանքը, որպես առանձին իրավական կատեգորիա, ՀՀ օրենսդրությամբ չի սահմանվում: Մնացած միջոցները (բարոյահոգեբանական դաստիարակություն, հանրային շփումներում էթիկայի կանոնների պահպանում, բարձր լեզվամշակույթի քարոզչություն, կրթական

մակարդակի բարձրացում և այլն) հայիդյախոսության վերահսկման և կարգավորման համար թույլ գործիքներ են:

Մինչդեռ հասարակական կյանքում հայիդյախոսությունը մեծ մասամբ ակտիվ է քաղաքական և սոցիալական իրավիճակից դժգոհ զանգվածների շրջանում, ուստի խոսույթի այդ ձևի սահմանափակման ուղին առաջին հերթին քաղաքացիական հասարակության պահանջների բավարարումն է:

Եզրակացություն: Հայիդյախոսությունը հասարակության ազգային լեզվամտածողությունն ու միջմշակութային փոխազդեցություններն արտացոլող երևույթ է, որի գործածման և ընկալման համատեքստը հաճախ ավելի կարևոր է, քան բուն բառերը: Սերնդափոխությանը զուգընթաց հայ հասարակական կյանքում երևան են գալիս հայիդյախոսության գործընթացային փոփոխություններ, որոնք հանրային կյանքում ձևավորում են այդ երևույթի գնահատման նոր մոտեցումներ: Պայմանավորված համացանցային հարթակի և համաշխարհայնացման գործոններով՝ արդի հայ խոսույթում նկատվում է հայիդյախոսության ակտիվության նվազում և ազդեցության թուլացում: Հայիդյախոսության սահմանափակման գործընթացում կարևորվում են օրենսդրական վերահսկումը, քաղաքացիական հասարակության կարգավիճակը և հանրության կրթամշակութային մակարդակը:

Գրականության ցանկ

1. Աճառյան Հր. Հայերեն արմատական բառարան, հ. Գ. - Եր. համալս. հրատ., 1977. - 635 էջ:
2. Հմայակյան Հ. Զրույցներ հայ մշակույթի մասին (հարցազրույցների ժողովածու). - Եր.: «Նորավանք» ԳԿՀ, 2008. - էջ 29-30:
3. Плущер-Сарно А.Ю. Матерный словарь как феномен русской культуры // Новая русская книга. - 2000, №2. - с. 74-80.
4. Виноградов В.В. Благим матом // История слов. - М.: ИРЯ РАН, 1999. - с. 59-60.
5. Мокиенко В. Словарь русской бранной лексики (матизмы, обсценизмы, эвфемизмы с историко-этимологическими комментариями). А-А - ЯЯ" (Berlin:DieterLENZVerlag, 1995). - <https://www.livelib.ru/author/6349-valerij-mokienko>
6. Քրեական («գողական») խոսվածքի բացատրական բառարան / Ա. Թադևոսյան, Ն. Մարգարյան, Ա. Ավագյան; ՀՀ ԳԱԱ ՀՆԻ. - Եր.: «Եվրասիա համագործակցություն» հիմնադրամ, 2023. - 160 էջ:
7. Պողոսյան Ա., Տաբու բառերի իմաստաթեմատիկ խմբերի դասակարգումն անգլերենում // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում. - 2019, 2(27). - էջ 98-115:
8. Knyazyan, A., & Artoni, L. **Body, Misogyny and Religion in Swear Words.** - <https://journals.yasu.am/index.php/arm-fol-angl/article/view/11215>
9. Ayunts A., Paronyan S., From Euphemism to Verbal Aggression in British and Armenian Cultures Hate speech // FLEKS Vol 7, No. 1 - Hate speech - 2020, Side 3/16. - <https://journals.oslomet.no/fleks/article/view/4173>
10. The Pragmatics of Swearing / Jay T., Janschewitz K. // Journal of Politeness Research. Language, Behaviour, Culture. 4 (2): 2008, p. 267-288.

11. Kapoor Hansika. Swears in Context: The Difference Between Casual and Abusive Swearing // Journal of Psycholinguistic, 2016. Research. 45 (2). - P. 259–274. doi:10.1007/s10936-014-9345-z. ISSN 0090-6905. PMID 25480107
12. Электронная библиотека книг В. Мокиенко. Русская бранная лексика: цензурное и нецензурное. - <https://itexts.net/avtor-v-m-mokienko/82972>
13. Մուրադյան Է. Հայիդյանքներ. կյանքից դեպի գրականություն. - <https://gretert.com/hayhoyanqner-kyanqic-depi-grakanut/>
14. Առաքելյան Գ. Հայիդյանք և հանդիմանանք. - <https://azg.am/am/>
15. Մեր լեզուն, մեր սեքսը: Մաս 1-4 [Լրագրողական հետազոտություն / Վարողներ՝ Մ. Մանոյան, Ա. Թադևոսյան]. - <https://mediamax.am/am/news/SexLanguage/4649/>
16. Գրիգորյան Վ. Տաղ անավարտ...». - <http://www.inknagir.org/old/index.php?groupid=27&task=content&id=54&lang=arm>
17. Եղիա Չուբար: Հայիդյանք // Մաճկալ, 1924/10. - <https://grahavak.blogspot.com/2020/12/blog-post.html>
18. Կիրակոսյան Տ. Հուզարտահայտչականությունը համացանցային հաղորդակցության մեջ. - Եր.: ԵՊՀ հրատ. - 2024, 190 էջ:
19. Ղազարյան Ա., Ասատրյան Դ. Վիրավորանք և գրպարտություն. իրավական պաշտպանության ուղեցույց. - Եր., 2025. - 60 էջ:

СУЩНОСТЬ И ОСОБЕННОСТИ ОБЩЕСТВЕННОГО ВОСПРИЯТИЯ СКВЕРНОСЛОВИЯ

Այրապետյան Լ.Ս., Դեվանյան Մ.Մ.

Предметом исследования настоящей статьи выступает сквернословие как сложный социолингвистический и психолингвистический феномен, отражающий состояние языковой культуры, нравственных ориентиров и уровень общественного развития. В работе рассматриваются происхождение, основные этапы эволюции и современные формы функционирования бранной лексики, а также факторы, влияющие на её распространение в различных социальных и коммуникативных средах.

Исследование основано на анализе научных подходов, представленных в зарубежной и армянской психолингвистике, социолингвистике и культурологии. Особое внимание уделено общественному восприятию ненормативной лексики, её роли в межличностной коммуникации, а также отношению представителей современной армянской интеллигенции к использованию бранных выражений в армянском языке.

Установлено, что под воздействием процессов глобализации, цифровизации коммуникаций, развития социальных сетей и межкультурного взаимодействия, характер употребления бранной лексики претерпевает существенные изменения. При этом в современном армянском языковом пространстве наблюдается трансформация как форм употребления, так и характера восприятия традиционных представлений о речевых табу. Обосновывается идея о том, что

существенную роль в ограничении распространения ненормативной лексики играют уровень правовой культуры общества, эффективность законодательного регулирования информационного пространства, состояние гражданского общества, а также образовательный и культурный уровень населения.

Ключевые слова: сквернословие, бранная лексика, ненормативная лексика, речевые табу, эвфемизмы, языковые заимствования, психолингвистика, социоллингвистика, цифровая коммуникация, регулирование интернет-платформ.

THE ESSENCE AND CHARACTERISTICS OF THE PUBLIC PERCEPTION OF PROFANITY

Hayrapetyan L., Tevanyan M.

The subject of this article is profanity as a complex sociolinguistic and psycholinguistic phenomenon that reflects the state of language culture, moral values, and the level of societal development. The paper examines the origins, major stages of evolution and contemporary forms of functioning of offensive and obscene vocabulary, as well as the factors influencing its spread across various social and communicative environments.

The study is based on an analysis of scholarly approaches presented in international and Armenian psycholinguistics, sociolinguistics, and cultural studies. Particular attention is given to the public perception of non-standard and offensive language, its role in interpersonal communication, and the attitudes of representatives of the contemporary Armenian intelligentsia toward the use of profane expressions in the Armenian language.

The findings indicate that under the influence of globalization, the digitalization of communication, the development of social media, and intercultural interaction, the nature of profanity usage is undergoing significant changes. At the same time, within the modern Armenian linguistic environment, there is a transformation both in the forms of use and in the perception of traditional notions of speech taboos. The article argues that the level of legal culture in society, the effectiveness of legislative regulation of the information space, the condition of civil society, and the educational and cultural level of the population all play a significant role in limiting the spread of non-standard and offensive language.

Keywords: profanity, offensive vocabulary, non-standard language, speech taboos, euphemisms, linguistic borrowings, psycholinguistics, sociolinguistics, digital communication, regulation of internet platforms.

Ներկայացվել է խմբագրության՝ 15.09.2025

Ընդունվել է տպագրության՝ 13.04.2026